ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 863-Ա

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՆԻՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 10-ՐԴ ՓՈՂ. ՏՈՒՆ 3/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՆՆԱԴԻ ՄՈՎՍԵՍԻ ՉԻՐԿԻՆՅԱՆԻ,ԱՍՏՂԻԿ ԲԱԳՐԱՏԻ ՉԻՐԿԻՆՅԱՆԻ,ՄԻԼԱՆԱ ԳԵՆՆԱԴԻԻ ՉԻՐՔԻՆՅԱՆԻ,ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԵՆՆԱԴԻԻ ՉԻՐԿԻՆՅԱՆԻ ԵՎ ՔՐԻՍՏԻՆԵ ԳԵՆՆԱԴՈՒ ՉԻՐԿԻՆՅԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 27.04.2010 թվականի N50-Ն «Իրավունքը հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով,26.12.2002 թվականի N510-Ն ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի Արտանիշ բնակավայրի 10-րդ փող, տուն 3/2 հասցեում, 05-018-0037-0001 կադաստրային ծածկագրով գտնվող շենք-շինության կառուցման և սպասարկման համար հատկացված 0.09հա հողամասին կից 0,13106հա հողամասը իրեն տրամադրելու և մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինական ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գեննադի,Աստղիկ,Ալեքսանդր,Քրիսինե Չիրկինյաններինին և Միլանա Չիրքինյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բավարարում է Հայաստանի Հանրապետության ՀՕ-117 ընդունված 10.06.2008թ., 26.12.2002թ. թիվ 50-Ն որոշմամբ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների և ՀՀ ՀՕ 64 հոդվածի 1-ին կետի պահանջներին:
2. Գեննադի Մովսեսի Չիրկինյանին՝ ծնված 01.10.1955թ.,Աստղիկ Բագրատի Չիրկինյանին՝ծնված 10.07.1962թ.,Միլանա Գեննադիի Չիրքինյանին՝ ծնված 18.06.1986թ.,Ալեքսանդր Գեննադիի Չիրկինյանին՝ծնված 29.10.1988թ. և Քրիստինե Գեննադու Չիրկինյանին՝ ծնված 11.03.1982թ.համատեղ սեփականության իրավունքով հատկացվել է 0.09 հա տնամերձ հողամաս,սակայն փաստացի օգտագործվում է 0,22106հա: Հողամասի վրա 1968-1992թթ. կառուցված մեկ հարկանի 94.22քմ ներքին և 137,63քմ արտաքին մակերեսով բնակելի տունը.,69.18քմ ներքին և 93.94քմ արտաքին մակերեսով 1965թվականին կառուցված անասնագոմը.,նույն թվականին 18.92քմ ներքին և 25.84քմ արտաքին

մակերեսով կառուցված խորդանոցը, որոնք կառուցված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ 26.12.2002 թվականի ՀՀ ՀՕ 510-Ն փաստաթղթի տիրապետման իրավունքով ճանաչել Գեննադի,Աստղիկ,Ալեքսանդր,Քրիստինե Չիրկինյանների և Միլանա Չիրքինյանի համատեղ սեփական գույք, իսկ իրենց կողմից 2023թվականին ինքնակամ կառուցված 5,30քմ ներքին և 6,48քմ արտաքին մակերեսով բնակելի տանը կից կցակառույցը թողնել որպես ինքնակամ շինություն:

3. Համայնքի կողմից Գեննադի,Աստղիկ,Ալեքսանդր,Քրիստինե Չիրկինյաններին և Միլանա Չիրքինյանին համատեղ սեփականության իրավունքով հատկացված 0.22106 հա հողամասը չի գտնվում ՀՕ 60-րդ հոդվածի ցանկում և բավարարում է ՀՕ 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2025թ. նոյեմբերի 10
ք. Ճամբարակ